ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան 0051, **Կոմիտասի** 49/2, **հեռ.** +374(10) 235-600, +374(11) 597-520, **է/փ**: info@msib.gov.am

ՀՐԱՄԱՆ N508-Ա-28.11.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N732-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 7-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների հաշվարկման ու գնահատման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Недействительная подпись

X

ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆ

Подписано: KOTOLYAN ARMEN 3810870129

ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆ

Հավելված

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների հաշվարկման ու գնահատման ընթացակարգը:
2. Առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու, ինչպես նաև տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագիրը կազմելու նպատակով տեսչական մարմինը տեղեկատվություն է հավաքագրում պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից:
3. Հավաքագրված տեղեկատվությունը մուտքագրվում է տեսչական մարմնի կողմից վարվող տվյալների բազա, որում առնվազն ներառվում են հետևյալ տվյալները՝
   1) տնտեսվարող սուբյեկտի լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում),
   2) կազմակերպական-իրավական ձևը,
   3) հարկ վճարողի հաշվառման համարը,
   4) վերջին ստուգման ավարտի ամսաթիվը,
   5) վերահսկման ենթակա ոլորտի (ոլորտների) անվանումը,
   6) տնտեսվարող սուբյեկտների ոլորտային ռիսկը,
   7) տնտեսվարող սուբյեկտների անհատական ռիսկը,
   8) տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր ռիսկը:

4. Տնտեսվարող սուբյեկտների ռիսկը գնահատվում է ոլորտային և անհատական ռիսկերի հանրագումարով, որի առավելագույն միավորը 180 է.

$R_ը=R_ո+R_ա$

Որտեղ՝ $R_ը$ - տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր ռիսկ,

$R_ո$ - ոլորտային ռիսկ,

$R_ա$ - անհատական ռիսկ:

5. Ոլորտային ռիսկի առավելագույն կշիռ է սահմանվում 90 միավորը:
6. Անհատական ռիսկը գնահատելիս հաշվի է առնվում տնտեսվարող սուբյեկտի գործունեության վերլուծության արդյունքները՝ առավելագույնը 40 միավոր և ստուգման արդյունքում ստուգաթերթով արձանագրված խախտումների համար սահմանված միավորների հանրագումարը՝ առավելագույնը 50 միավոր:

Rա = Rգ + Rս

Որտեղ՝ Rա - -անհատական ռիսկ

Rգ - -տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերլուծության արդյունքում ձևավորված ռիսկ,

Rս - -ստուգաթերթով արձանագրված խախտումների արդյունքում ձևավորված ռիսկ:

7. Այն տնտեսվորող սուբյեկտները, որոնց մոտ տեսչական մարմինը ստուգում չի իրականացրել անհատական ռիսկը հավասար է զերոյի:
8. Տեսչական մարմինը տվյալների բազայում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտները ըստ ռիսկայնության աստիճանի նվազման դասակարգվում են հետևյալ երեք խմբերից որևէ մեկում՝
   1) բարձր ռիսկայնության՝ մինչև քսան տոկոսը ,
   2) ցածր ռիսկայնության՝ մինչև երեսուն տոկոսը,
   3) միջին ռիսկայնության՝ տվյալների բազայում առկա այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք չեն դասակարգվում բարձր կամ ցածր ռիսկայնության խմբերից որևէ մեկում:

9. Կախված տնտեսվարող սուբյեկտի ռիսկայնության աստիճանից տեսչական մարմնի կողմից միևնույն տնտեսվարող սուբյեկտում ստուգումները կարող են իրականացվել հետևյալ հաճախականությամբ՝
   1) բարձր ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան տարին 1 անգամ.
   2) միջին ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 3 տարին 1 անգամ.
   3) ցածր ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 5 տարին 1 անգամ:
10. 9-րդ կետով սահմանված տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:
11. Տեսչական մարմնի կողմից վարվող տվյալների բազան պարբերաբար թարմացվում է՝ հիմք ընդունելով տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքները, ինչպես նաև հավաքագրված տեղեկատվությունը:
12. Տեսչական մարմնի կողմից վարվող տվյալների բազայի հիման վրա կազմվում է տեսչական մարմնի ստուգումների տարեկան հերթական ծրագիրը՝ հետևյալ համամասնությամբ.
   1) բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները կազմում են տվյալ տարում ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների առնվազն յոթանասուն տոկոսը.
   2) ցածր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները կազմում են տվյալ տարում ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների առավելագույնը հինգ տոկոսը: